

---

---

**ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ Խ. Վ.**

Հայ միջնադարյան աստվածաբանական գրականության մեջ մեծ տեղ են գրավում հղումները մինչքաղկեդոնյան հայրերի ստեղծագործությունների վրա: Այդ ստեղծագործությունները օգտագործվել են որպես հիմնավորումներ Հայ եկեղեցու աստվածաբանական և մասնավորապես քրիստոսաբանական համակարգի համար: Մինչքաղկեդոնյան հայրերի աշխատությունների գերակշիռ մասը գրված է հունարենով, և աստվածաբանական ձևակերպումները տրված են որոշակի եզրույթների միջոցով, ինչպիսիք են **Ֆիսիս, ուսիս, իպոստասիս, պրոսոպոն** և այլն:

Կարելի էր ակնկալել, որ այդ եզրույթները հայերեն պետք է թարգմանվեին որոշակի, հայերեն համարժեքներով, որոնց հարցում պետք է որ մեր աստվածաբանների շրջանում լինեի համաձայնություն: Սակայն, ցավոք, քննությունը ցույց է տալիս, որ դա այդպես չէ: Եթե առաջին երկու եզրույթների հարցում կա բավական լավ համաձայնություն, և **Ֆիսիսը** թարգմանվել է որպես «բնու-թյուն», իսկ **ուսիան**՝ «էություն», ապա ցավոք, նույնը չի կարելի ասել մնացած երեք եզրույթների հարցում:

Եվ այստեղից առաջանում է բավական լուրջ անհամաձայնություն թե՛ միջնադարյան և թե՛ մանավանդ ժամանակակից աստ-վածաբանների շրջանում: Մասնավորապես, երբ ժամանակակից աստվածաբանները ցանկանում են, հենվելով միջնադարյան հեղինակավոր աստվածաբանների աշխատությունների վրա, բացատրել մեր եկեղեցու աստվածաբանական համակարգը, ապա գրեթե անխուսափելիորեն հանդիպում են հակասական կամ գոնե հակասական թվացող ձևակերպումների, ինչը գրեթե միշտ խոչընդոտում է ժամանակակից լեզվով հստակ ձևակերպելու Հայ Առաքելական եկեղեցու աստվածաբանությունը և մանավանդ որոշակիորեն ցույց տալու նրա համակարգի տարբերությունը մյուս եկեղեցիների աստ-վածաբանական համակարգերից:

Ավելի լավ հասկանալու համար խնդրի լրջությունը նշենք, որ Հայ եկեղեցու աստվածաբանության մասին յուրաքանչյուր գիրք կամ աշխատություն շեշտում է այն հարցը, որ Հայ եկեղեցին ընդունում է առաջին երեք տիեզերածոդոլների որոշումները և ձևակերպումները, և չի ընդունում Քաղկեդոնի ժողովից սկսած՝ մյուս այսպես կոչված «տիեզերածոդոլների» որոշումները և ձևակերպումները: 431 թ. Եփեսոսի երրորդ տիեզերածոդոլը քննարկեց շատ նուրբ և էական քրիստոսաբանական հարցեր, որոնք ընկած են թե՛ Հայ եկեղեցու, թե՛ մյուս ոչ քաղկեդոնական

եկեղեցիների, և որքան էլ զարմանալի է, նաև քաղկեդոնական եկեղեցիների քրիստոսաբանական համակարգի հիմքում: Հետևաբար պինհայտ է, որ աստվածաբանական համակարգերի տարբերությունը, որի պատճառով Հայ եկեղեցին չի ընդունում Քաղկեդոնի ժողովը, մեծապես կախված է հենց 3-րդ տիեզերածողովի փաստաթղթերի տարբեր մեկնաբանումներից:

Յույց տալու համար տերմինաբանական խնդիրները մեզ համար բավական է մեջբերել 3-րդ տիեզերածողովի կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ Սբ Կյուրեղ Ալեքսանդրացու 12 նզովքները բնագրով և հետևել, թե ինչպես են այն թարգմանել հայ իրականության մեջ տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակներ:

Ավելի ստույգ մենք կկենտրոնանանք 12 նզովքներից 3-րդի և 4-րդի վրա, որտեղ էլ հանդիպում են վերոհիշյալ **իպոստասիս**, **պրոսուպոն** եզրույթները: Ստորև բերենք այդ նզովքների հունարեն բնագիր տեքստը՝.

ԿԵ՛լ տիς ἐπὶ τοῦ ἐνὸς Χριστοῦ διαιρεῖ τὰς **ὑποστάσεις** μετὰ τὴν ἔνωσιν, μόνη συνάπτων αὐτὰς συναφείᾳ τῇ κατὰ τὴν ἀξίαν ἢ γοῦν ἀθθεντίαν ἢ δυναστείαν καὶ οὐχὶ δὴ μᾶλλον συνόδωι τῇ καθ' ἔνωσιν φυσικῆν, ἀνάθεμα ἔστω.

Ը Ե՛լ տիς **προσώποις** δυσὶν ἢ γοῦν **ὑποστάσεων** τὰς τε ἐν τοῖς εὐαγγελικοῖς καὶ ἀποστολικοῖς συγγράμμασι διανέμει φωνὰς ἢ ἐπὶ Χριστῶι παρὰ τῶν ἁγίων λεγομένας ἢ παρ' αὐτοῦ περιέαντοῦ καὶ τὰς μὲν ὡς ἀνθρώποι παρὰ τὸν ἐκ θεοῦ λόγον ἰδικῶς νοουμένωι προσάπτει, τὰς δὲ ὡς θεοπρεπεῖς μόνωι τῶι ἐκ θεοῦ πατρὸς λόγωι, ἀνάθεμα ἔστω.

Ընդգծված են հունարեն **իպոստասիս** և **պրոսուպոն** բառերը: Քանի որ 12 նզովքները խիստ կարևոր աստվածաբանական նշանակություն ունեն մեզ համար, բնականաբար, դրանք ամենաթարգմանված հատվածներից են և տարբեր հեղինակների թարգմանությամբ ներառված են մի քանի ժողովածուներում: Ուստի դրանք առավել հարմար են համեմատություններ անցկացնելու հունարեն բնագրի և հայերեն թարգմանությունների միջև: Ստորև բերենք մի քանիսը այդ թարգմանություններից.

#### Տարբերակ 1

Նզովք Գ. Եթե որ զմի Քրիստոսն բաժանեցէ յերկուս **էրեսս** յետ միանալոյն, և միայն մերձաւորութիւն և պատիւ և ճոխութիւն տացէ նմա, և ո՛չ միութիւն բնութեամբ, նզովեցի:

Նզովք Դ. Եթե որ յերկուս **դեմս** և յերկուս **զարութիւնս** բաժանեցէ զբան Գրոց՝ աւետարանչաց և առաքելոց, և որ վասն Քրիստոսի ի սրբոցն ասացեալ իցէ, և կամ իւր վասն իւր, և զոմանս մարդոյ առանձինն իմացէ և զոմանս Բանին, որ յԱստուծոյ Հօրէ, նզովեալ<sup>2</sup>:

<sup>1</sup> PG (Patrologiæ cursus completus [Series Græca]), v. 76, p. 401.

<sup>2</sup> Կնիք հաւատոյ, Էջմիածին, 1914, էջ 232-233:

Այստեղ տեսնում ենք, որ իպոստասիս բառը ոչ միարժեքորեն թարգմանվել է որպես երես կամ զարութին, իսկ պրոսոպոն բառը՝ դեմք:

Հետևյալ թարգմանությունները բերված են «Գիրք թղթոց» ժողովածուից.

### Տարբերակ 2

Նզովք Գ. Եթե ոք զմի Քրիստոս բաժանեցե՛լ յերկուս դէմս յետ միանալոյն, և միայն մերձաւորութիւն յարելութեան ասիցե՛ իբրև պատուով, կամ ճոխութիւն և զարութին գտեալ, և ոչ միութիւն բնութեամբ, նզովեալ եղիցի:

Նզովք Դ. Եթե ոք յերկուս երեսս և կամ յերկուս զարութիւնս զաւետարանացն և զառաքելոցն զգրեալսն և զբարբառսն բաժա- նեցե՛լ, և կամ զՔրիստոսի ասացեալսն սրբովք իւրով, և կամ զոր իւր իսկ վասն իւր իցե՛ ասացեալ, զոմանս իբր մարդոյ ուրոյն ի Բանէն Աստուծոյ՝ իբր յարելութեամբ իմանայցե՛, և զոմանս դարձեալ աստուածաբար միայն՝ որ ի Բանէն Աստուծոյ Հաւր. նզովեալ եղիցի<sup>3</sup>:

Այս անգամ մենք տեսնում ենք, որ իպոստասիս բառը թարգմանվել է դեմք կամ զարութին բառերով, իսկ պրոսոպոն բառը՝ երես: Եվ կրկին, ինչպես նախորդ օրինակում, անհասկանալի պատճառով միևնույն իպոստասիս բառը թարգմանվել է բոլորովին տարբեր հայերեն բառերով:

Հաջորդ թարգմանության հեղինակը հայտնի է. նա Ստեփաննոս Սյունեցի եպիսկոպոսն է, որը նախքան իր եպիսկոպոս ձեռնադրվելը գտնվում էր Կոստանդնուպոլսում, ուսումնասիրում էր հունարենը և կատարում աստվածաբանական երկերի թարգմանություններ:

### Տարբերակ 3

Նզովք Գ. Եթե ոք ի վերայ միոյն Քրիստոսի որոշեցե՛ զանձնաւորութիւնսն յետ միաւորութեանն միայն հպեցուցանելով զնոսս ըստ յարակցութեան՝ որ ըստ պատույ, այսինքն ըստ իշխանութեան կամ զարութեան և ոչ յաւետ ժողովմամբ ըստ միաւորութեան բնաւորականի, նզովեալ եղիցի:

Նզովք Դ. Եթե ոք երկուց դիմաց, այսինքն անձնաւորութեանց, զորս յաւետարանականսն և յառաքելականսն գրեալ բաժանե՛ զձայնս, կամ ի վերայ Քրիստոսի առ ի սրբոցն ասացեալս կամ ի նմանէ յաղագս իւր, և է ինչ, որ մարդոյ առանց Աստուծոյ Բանին յատկապէս իմացելոյ հպեցուցանե՛, և է ինչ զորս, որպէս աստուածավայելուչս միայնոյ Աստուծոյ Բանին, նզովեալ եղիցի<sup>4</sup>:

<sup>3</sup> Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 22:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 419:

Բերենք նաև Տիմոթեոս Կուզի Հակաճառության գրքում տրված թարգմանությունը, որը հավանաբար Մբ. Կյուրեղ Ալեքսանդրացու նգովքների առաջին հայերեն թարգմանությունն է:

*Տարբերակ 4*

Նգովք Գ. Որ ոք ի վերայ միոյ Քրիստոսի բաժանէ զեն-թակացութիւնս յետ միաւորութեանն միայն շարայարելով զնոսա՝ շարայարութեամբ ըստ իշխանության կամ եթէ ճոխութեան, և ոչ առավել ուղեկցութեամբ ըստ միաւորութեան բնականի, նգով եղիցի:

Նգովք Դ. Որ ոք դիմաց երկուց կամ եթէ ենթակացութեանց զյաւետարանականս և առաքելականս շարադրութիւնս բաշխէ ձայնս, կամ ի վերայ Քրիստոսի քան զսրբոցն ասացեալս, կամ առ ի նմանէ յաղագս իւր, և զոմանս իբր մարդոյ, քանզի յԱստուծոյ Բան իմացելում առյարէ, իսկ զոմանս աստուածավայելուչս միայնում յԱստուծոյ Հարէ Բանին, նգով եղիցի<sup>5</sup>:

Կարելի է ավելացնել մի տարբերակ ևս, որը բերվում է Արշակ Տէր-Միքէլյանի գրքում<sup>6</sup>: Նա մեջբերում է միայն 3-րդ նգովքը: Սակայն քանի որ նա նշում է իր աղբյուրը՝ Պարապմանց գիրքը<sup>7</sup>, ապա մենք առանց դժվարության կարող ենք ներկայացնել նաև 4-րդ նգովքը այդ գրքից.

*Տարբերակ 5*

Նգովք Գ. Եթէ ոք զմի Քրիստոս բաժանեցէ յերկուս դէմս յետ միանալոյն, և միայն մերձաւորութիւն յարելութեան ասիցէ պատուով, և կամ ճոխութիւն և զօրութիւն, և ոչ միութիւն բնութեամբ, նգովեալ եղիցի:

Նգովք Դ. Եթէ ոք յերկուս երեսս կամ յերկուս զօրութիւնս զաւետարանչացն և զառաքելոցն գրեալսն և ըզբարբառսն բաժանեցէ, և կամ զՔրիստոսի ասացեալսն սրբովք իւրովք, և կամ զոր իւր իսկէ ասացեալ, և զոմանս իբրեւ մարդոյ ուրոյն ի բանէն Աստուծոյ իբրեւ յարելութեամբ իմանայցէ, և զոմանս դարձեալ աստուածաբար միայն Աստուծոյ Բանին Հօր, նգովեալ եղիցի:

Եվ կրկին միևնույն հունարեն «իպոստասիս» բառը անհասկանալի պատճառով թարգմանվել է երկու կերպ՝ դէմք և զօրութիւն:

<sup>5</sup> Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, Էջմիածին, 1908, էջ 165-166:  
<sup>6</sup> Արշակ Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Տիիսիս, 1900, էջ 221:  
<sup>7</sup> Կիրեղ Աղեքսանդրացի, Գիրք Պարապմանց, Կոստանդնուպոլիս 1717, էջ 472:

Այսպիսով, մենք նկատում ենք, որ կա բավական լուրջ խառնաշփոթ նույնիսկ այս փոքրիկ հատվածի թարգմանության հարցում, մինչդեռ այս նգովքները, լինելով 3-րդ Տիեզերածոդովի կենտրոնական փաստաթղթերից մեկը, չափազանց մեծ նշանակություն ունեն Հայ եկեղեցու քրիստոսաբանության համար: Կարելի է ասել, որ մեր եկեղեցու քրիստոսաբանական դավանությունը մեծապես հիմնված է Մբ Կյուրեղի այս նգովքների և մի քանի նամակների վրա, և վերոհիշյալ անհամաձայնությունը կարող է առաջացնել մեր եկեղեցու քրիստոսաբանության թյուրբանաբաններ՝ ընդհուպ կատարյալ հակասական կարծիքներ:

Նման թյուրիմացությունների ապացույցը մենք տեսանք հենց բերված օրինակներից առաջինում և երկրորդում, որտեղ միննույն թարգմանչի միննույն թարգմանության, միննույն էջում **Իպոստասիս** հունարեն բառի փոխարեն տեսնում ենք սկզբում **երես** բառը, իսկ մի քանի տող ներքև՝ **զաւրութիւն** բառը: Կամ ինչպես երկրորդ օրինակում՝ նույն **Իպոստասիս** հունարեն բառը թարգմանվում է սկզբում **դէմք** բառով, իսկ մի քանի տող ներքևում անհասկանալի պատճառով թարգմանվում է **զաւրութիւն** բառով:

Եթե ամբողջացնենք, ապա ունենք հետևյալ անմխիթար պատկերը **ὐποστάσις** (Իպոստասիս) և **προσῶπον** (պրոսոպոն) բառերի հայերեն թարգմանության համար.

**ὐποστάσις** (Իպոստասիս) – երես, զօրութիւն (տարբերակ 1), դէմք, զօրութիւն (տարբերակ 2, 5), անձնաւորութիւն (տարբերակ 3), ենթակացութիւն (տարբերակ 4).

**προσῶπον** (պրոսոպոն) – դէմք (տարբերակ 1, 3, 4), երես (տարբերակ 2, 5):

Իպոստասիս բառի համար կա չորս տարբեր թարգմանություն, իսկ պրոսոպոն բառի համար՝ երկու տարբեր թարգմանություն, ընդ որում՝ դէմք տարբերակը առկա է այդ երկու տարբեր բառերի համար:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ բոլոր թարգմանությունները տարբեր դարերում կատարել են տարբեր հեղինակներ, և չի եղել մի վերջնական հեղինակավոր որոշում այդ եզրույթները միասնականացնելու համար: Այդպիսի հեղինակավոր որոշման դեր կարող էր խաղալ Մանազկերտի նշանավոր ժողովը (726 թ.)՝ Մբ. Հովհան Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի մասնակցությամբ: Եվ իսկապես, այդ երկու հեղինակների աշխատություններում հիմնավորապես քննված են թե՛ այդ եզրույթները և թե՛ անգամ դրանց սահմանումները, և իրենց բոլոր ձևակերպումներով ցուցաբերում են նախանձելի հետևողականություն ինչպես յուրաքանչյուրն իր ստեղծագործության ներսում, այնպես էլ միմյանց հետ համեմատելիս: Մանավանդ որ ասորի եպիսկոպոսների մասնակցությունը և հավանությունը այդ ժողովի որոշումներին, ինչպես նաև Խոսրովիկի թղթակցությունը ասորիների և քաղկեդոնականների հետ այդ ժողովին տալիս է միջազգային կարգավիճակ:

Սակայն դրանից հետո, օրինակ, Մբ. Գրիգոր Տաթևացու (XIV-XV դդ.) գործերում, մասնավորապես Գիրք Հարցմանցում և Ոսկեփորիկում կրկին նկատում ենք, որ

իպոստասիս բառի փոխարեն Տաթևացին օգտագործում է երբեմն **դեմք** բառը, իսկ երբեմն՝ **ենթադրություն** բառը: Վերջինս, ինչպես նաև վերևում հանդիպած **ենթակացություն** բառերը հունարեն **իպոստասիս** բառի բառացի թարգմանության տարբերակներն են՝ **իպո** - ենթա, **ստասիս** - դրվել, կայանալ:

Իրավիճակը բարդանում է նրանով, որ այս խառնաշփոթը տեղափոխվում է նաև մեր ժամանակներ, երբ այսօրյա արժանավոր աստվածաբանները միննույն աշխատության մեջ բերում են V դարի հայրերից հատվածներ և փորձում ամփոփել մեր Եկեղեցու քրիստոսաբանությունը: Հավանաբար առանց նկատելու նրանք միննույն հունարեն բառը թարգմանում են տարբեր հայերեն բառերով, և ընթերցողի մեջ սպավորություն է ստեղծվում, թե խոսքը տարբեր հասկացությունների մասին է, այն աստիճան, որ հարցականի տակ է դրվում հեղինակի մտքի միարժեք ընկալումը: Բերենք երկու օրինակ:

Առաջին օրինակը «Գանձասար» հանդեսի անդրանիկ՝ Ա հատորում տեղ գտած կարևոր հոդվածն է «Երեք Տիեզերական Ժողովների Դավանությունը» վերնագրով<sup>8</sup>:

Մասնավորապես, հեղինակը մեջբերում է խնդրո առարկա 4-րդ նգովքը գրաբար և տալիս դրա թարգմանությունը.

Եթե ոք յերկուս **դեմս** և յերկուս **գարությունս** բաժանեցէ զբան Գրոց՝ աւետարանչաց և առաքելոց, և որ վասն Քրիստոսի ի սրբոցն ասացեալ իցէ, և կամ իւր վասն իւր, և զոմանս մարդոյ առանձինն իմացէ և զոմանս Բանին, որ յԱստուծոյ Հօրէ, նզովեալ եղիցի:

«Ով երկու **դեմքերի** և **գորությունների** է բաժանում Գրոց՝ աւետարանիչների և առաքելների խօսքը, որ Քրիստոսի մասին ասուել է սուրբի կողմից, կամ Ինքն է Իր մասին ասել, մարդուն վերաբերուողը առանձին, իսկ Բանինը, որ Հայր Աստուծոց է, առանձին, նզովեալ լինի»<sup>9</sup>:

Սա ակնհայտորեն առաջին տարբերակում ցույց տրված թերի թարգմանված գրաբար հատվածն է՝ վերցված «Կնիք Հաւատոյ» ժողովածուից: Եվ տեսնում ենք, որ հեղինակը ոչ միայն չի նկատում գրաբար թարգմանության թերությունը, այլև նույնությամբ թարգմանում է աշխարհաբարի:

Մինչդեռ նույն հոդվածում հեղինակը պնդում է. «Սա կատարուեց Գրիգոր Աստվածաբանի աշխատանքներից հետո, որտեղ նա նոյնացրեց **իպոստասիսը** և «**անձը**»<sup>10</sup>: Փաստորեն, ստացվում է, որ միննույն **իպոստասիս** բառը հեղինակը նույն հոդվածում թարգմանում է մի կողմից որպես անձ, իսկ մյուս կողմից, Մբ. Կյուրեղի

<sup>8</sup> Մեսրոպ քահանա Արամյան, Երեք Տիեզերական Ժողովների Դավանությունը, Գանձասար հանդես, Ա, 1992, էջ 110-140:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 126:

նզովքում՝ որպես **զորութիւն**: Նմանապես, **պրոստպոն** բառը 4-րդ նզովքում թարգմանվել է որպես **դէմք**, իսկ հենց նույն Մբ. Կուրեղից բերված Եբրայեցիների թղթի մեկնության հաստատում՝ **երես**<sup>11</sup>: Ակնհայտ է, որ նման խառնաշփոթ եզրութաբանությունը, որ գալիս է միջնադարից, բազմաթիվ հարցականներ է առաջացնում ընթերցողի մեջ և դժվարացնում հասկանալը, թե վերջապես ո՞րն է մեր եկեղեցու դիրքորոշումն այդ հարցում: Ավելին, սա խիստ դժվարացնում է մեր եկեղեցու երկխոսությունը այլ եկեղեցիների հետ դավանական հարցերում, քանի որ շատ հաճախ այդ երկխոսություններում կարևոր է հենց այդ եզրութների հստակ ըմբռնումը:

Մյուս օրինակը ժամանակակից մի գրքից է, որը կոչվում է «Մեր հավատքը»<sup>12</sup>: Ապողինարի մասին խոսելիս հեղինակը գրում է.

**«Գունենանք նաև երկու դէմքեր (պրոստպոն) Աստուած և մարդ»<sup>13</sup>:**

Բառացիորեն հաջորդ էջում հեղինակը թարգմանում է լրիվ այլ կերպ.

**«Հետևաբար, Քրիստոսի մեջ չկան երկու անձեր (պրոստպոն)...»<sup>14</sup>:**

Այսինքն՝ հեղինակը միննույն **պրոստպոն** (կամ **պրոստպոն**) բառը սկզբում թարգմանում է որպես **դէմք**, իսկ հետո՝ անձ:

Սույն գրքից բերված այս երկու հատվածները, ինչպես նաև վերևում բերված մի շարք օրինակներ, բնականաբար ցույց են տալիս, որ հեղինակի եզրակացությունն այն մասին, որ **«առաձնաւորութիւն բառը կթարգմանէ «իպոստասիս» բառը, որուն փոխարէն հայերը նախընտրած են «անձ» բառը», ընդհանուր առմամբ սխալ է և կարող է ճիշտ համարվել միայն թարգմանությունների մի մասի համար:**

Խնդիրը միայն այն չէ, որ մենք միջնադարյան և ժամանակակից աստվածաբանական երկերը կարդալիս ստիպված ենք գլխի ընկնել կամ հունարենով ստուգել, թե ինչպես է տվյալ թարգմանիչը գերադասել թարգմանել կարևորագույն աստվածաբանական եզրութները հունարենից: Շատ դեպքերում դա նույնիսկ հնարավոր չէ, որովհետև բացի թարգմանություններից, մենք ունենք նաև հայ աստվածաբանների արժեքավոր աստվածաբանական գործեր, որոնց հունարենը բնականաբար չկա: Ամենամեծ խնդիրն այն է, որ, ինչպես Խոսրովիկ Թարգմանիչն է ցույց տալիս, բուն տարբերությունները Հայ եկեղեցու և քաղկեդոնական եկեղեցիների քրիստոսաբանության միջև ծագում են այն բանից, որ քաղկեդոնականները նույնացնում են **իպոստասիս** և **պրոստպոն** (ըստ Խոսրովիկի՝ **դէմք** և **անձ**) բառերով արտահայտվող հասկացությունները<sup>15</sup>, մինչդեռ Հայոց եկեղեցու քրիստոսաբանական համակարգի

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>12</sup> Մեր հավատքը, Հավատոյ հանգանակ, Դաւանանք Հայ Եկեղեցոյ, խմբ. Շահէ արքեպիսկոպոս Աճեմյան, Էջմիածին, 2001:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>15</sup> Խոսրովիկ Թարգմանիչ, Դավանական Երկեր, Ե., 2015, էջ 37:

ողջ հասկացությունն ու անհակասականությունը հիմնված են այդ երկու հասկացությունների նուրբ և միաժամանակ պարզորոշ տարբերության վրա: Եվ այս բանը հաշվի առնելով՝ ուղղակի աններելի է ցանկացած շփոթ այս երկու աստվածաբանական եզրույթների միջև, որովհետև այն կտանի դարերով մեր մշակված քրիստոսաբանության թյուրբմբռնման, և եթե այդ շփոթից ելնելով՝ այդ երկու եզրույթները մի օր նույնացվեն, կարող է տանել դեպի քաղկեդոնական քրիստոսաբանություն: Այս հարցը, բացի Խոսրովիկի նշված գրքի արևելահայերեն թարգմանությունից, մենք բավական մանրամասն վերլուծել ենք նաև մեկ ուրիշ հոդվածում<sup>16</sup>:

Ներկա հոդվածում մենք ձգտեցինք վեր հանել այն անցանկալի վիճակը, որը գոյություն ունի մեր աստվածաբանական գրականության կարևորագույն եզրութաբանական հարցերում: Փորձեցինք ցույց տալ, որ դա հետևանք է միջնադարում եզրույթների թարգմանության հարցում աստվածաբանների անձնական մոտեցման, եզրույթների միասնականացման հարցում դպրոցների ոչ բավարար համագործակցության կամ գուցե այլ պատճառների, որոնք դուրս են մեր քննության նյութից. դա ավելի շուտ գուտ պատմաբանասիրական քննության առարկա է: Փաստ է, որ մենք այսօր ունենք այս վիճակը, և դա լուրջ հակասություններ է հարուցում աստվածաբանական տարբեր հարցերում:

Որքան էլ վերոհիշյալ վիճակն անցանկալի է, սակայն հայ աստվածաբանական գրականության մի շարք արժեքավոր գործեր թույլ են տալիս պատվով դուրս գալ ստեղծված իրավիճակից, և բարեխիղճ մոտեցման դեպքում Հայ Եկեղեցու աստվածաբանական համակարգը ամենևին չի տուժում: Մասնավորապես մեր համոզումն է, որ Խոսրովիկ Թարգմանչի և Սբ. Հովհան Օձնեցու ստեղծագործությունները իրենց հետևողական դիրքորոշմամբ ցույց են տալիս լուծման ուղին: Եվ որքան էլ տարօրինակ է, նույն կերպ էլ Ստեփանոս Սյունեցու աշխատությունները, թեև նա Խոսրովիկի և Օձնեցու գործերին հակառակ եզրութաբանական մոտեցում է ցուցաբերում, նրա աստվածաբանական ըմբռնումը նույնական է Խոսրովիկի և Օձնեցու ընկալման հետ, եթե համապատասխան ճշտում անենք նրա եզրութաբանության մեջ:

Այսպիսով, ասվածը թույլ է տալիս ասելու, որ հասունացել է մեր աստվածաբանական գրականության մեջ ոչ միայն կատարել եզրույթների միասնականացում, այլև այդ բաներին համապատասխանող հասկացությունները սահմանել առավելագույնս հստակ և ոչ հակասական կերպով:

Դրա համար, մեր կարծիքով, առաջին հերթին անհրաժեշտ են որոշակի քննարկումներ և լուծումների որոնումներ:

<sup>16</sup> Գրիգորյան Խ., «Դեմք» հասկացությունը նախաքաղկեդոնյան հայրերի գործերում (Պատմաբանասիրական հանդես, 2013, - 3, էջ 215-222):



**ПЕРЕВОД ТЕРМИНОВ В СРЕДНЕВЕКОВОМ АРМЯНСКОМ БОГОСЛОВИИ****ГРИГОРЯН Х. В.**

Резюме

Сравнение оригинального греческого текста 3-го и 4-го анафематизмов св. Кирилла Александрийского с разными армянскими переводами выявляет существенную неоднозначность армянских переводов терминов «ипостасис» (ипостась) и «просопон» (лицо), что нашло отражение в работах современных богословов.

В силу сказанного назрел вопрос унификации перевода данных терминов на основе их теологических значений, вошедших в обиход Армянской апостольской церкви.

**TRANSLATION OF TERMS IN THE MEDIEVAL ARMENIAN THEOLOGY****KH. GRIGORYAN**

Abstract

Comparison of the Greek original text of 3<sup>rd</sup> and 4<sup>th</sup> anathemas of St. Cyril of Alexandria and the Armenian translation of that text in different sources shows serious discrepancies in the Armenian equivalents of the theological terms such as “hypostasis” and “prosopon” (person). These discrepancies often are transferred to the works of modern theologians.

The need to unify these translations is underlined and the possible way to come to this unification is shown.